ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<06>> << հունիս>> 2019 թ N 56

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԹԵՎՈՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ կետով , «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Թևոս Հակոբյանի հետ կնքած 2014 թվականի հունիսի 6-ի N264 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2019 թվականի հունիսի 6-ից Թևոս Հակոբյանին ազատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Մարտիրոսի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ կնքած 2014 թվականի հունիսի 6-ի N264 աշխատանքային պայմանագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Մարտիրոսի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները դնել ուսումնական գծով տեղակալ Առաքել Առաքելյանի վրա:

3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ու վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:

10.06.2019

ՏՐԴԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN TRDAT 2901890687

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ